

ՓԼ/ԱՖ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆ



ՓԼ/ԱՖ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՇՏԵՄԱՐԱՆ

Այս նյութը մշակվել է **Միացյալ Թագավորության միջազգային զարգացման շրջանակում՝ ՄԹ** կառավարության ֆինանսավորմամբ, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի հետ համագործակցությամբ: Շտեմարանում արտահայտված կարծիքները հեղինակներին են և հնարավոր է, որ դրանք ոչ միշտ համընկնեն ծրագիրը ֆինանսավորող կազմակերպությունների, ՄԹ կառավարության պաշտոնական քաղաքականության կամ պաշտոնական դիրքորոշման հետ:

Ա

Ազատ առևտրի գոտի

Երկրի ներսում աշխարհագրորեն սահմանափակ տարածք, որտեղ գործում են տարբերվող կարգավորումներ, օրինակ՝ ներմուծվող/արտահանվող ապրանքներն ու ծառայությունները չեն հարկվում:

Ազատ առևտրի գոտիները խոցելի են ՓԼ/ԱՖ ռիսկերի նկատմամբ, քանի որ, որպես կանոն, բնութագրվում են պետական թույլ վերահսկողությամբ, ապրանքների/ծառայությունների և իրավաբանական անձանց ստուգման ոչ խիստ ընթացակարգերով, մաքսային մարմինների հետ համագործակցության բացակայությամբ:

Ակտիվ

Ֆիզիկական կամ իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող և դրամական արժեք ունեցող ցանկացած գույք:

Ոչ ընթացիկ ակտիվներն ունեն առնվազն մեկ տարի օգտագործման ժամկետ: Դրանց թվին են դասվում շենքերը, սարքավորումները, գույքը, հողը, համակարգչային ծրագրերը և այլն:

Ընթացիկ ակտիվները նախատեսված են ընկերության ամենօրյա գործունեության ֆինանսավորման համար և օգտագործվում, սպառվում կամ վաճառվում են մեկ տարվա ընթացքում: Ընթացիկ ակտիվներ են դեբետորական պարտքերը, կանխիկ դրամական միջոցները, դրանց համարժեքները, հումքը, արժեթղթերը և այլն:

Ակտիվների բլոկավորում/սառեցում

Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ընթացքում կամ դրա արդյունքում ֆիզիկական կամ իրավաբանական անձի՝ սեփական ակտիվներին հասանելիության կասեցում:

Ակտիվների բռնագրավում

Ակտիվների օտարում և դրանց նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում պետությանը՝ իրավասու մարմնի կամ դատարանի որոշմամբ:

Ակտիվների միախառնում

Հանցավոր ճանապարհով ստացված միջոցները (հաճախ ֆինանսական) որևէ հաստատության միջոցով օրինական տնտեսական (հաճախ ֆինանսական) համակարգ առաջին անգամ մտցնելը, օրինակ՝ դրանք ավանդ դնելու, արժեթղթեր կամ այլ ակտիվներ ձեռք բերելու միջոցով՝ երբեմն միջոցները մասնատելով ավելի փոքր գումարների, որպեսզի դրանք կասկած չհարուցեն կամ չգերազանցեն պարտադիր հաշվետվություն տրամադրելու համար նախատեսված սահմանաչափը:

Ակտիվների փախուստ

Տուգանքներից, բռնագրավումներից կամ այլ պատժամիջոցներից խուսափելու նպատակով ակտիվների ապօրինի փոխադրում այլ երկիր:

Ակտիվների պաշտպանություն

Սեփականատիրոջ դեմ պահանջների ներկայացման դեպքում ակտիվների խոցելիությունը նվազեցնելու նպատակով սեփականության վերականգնակերպման գործընթաց:

Ահաբեկչության հետ կապված անձ

Ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձ, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում:

Ահաբեկչության ֆինանսավորում

Ահաբեկչության կազմակերպմանը կամ իրականացմանը, ահաբեկչական կազմակերպություններին կամ անհատ ահաբեկիչներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն աջակցելը միջոցների հավաքագրման կամ տրամադրման միջոցով: Ըստ ՖԱԹՖ 5-րդ Հանձնարարականի՝ ահաբեկչության ֆինանսավորման հանցագործությունների սուբյեկտների շրջանակը պետք է ներառի անձանց, ովքեր դիտավորությամբ որևէ կերպ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տրամադրում կամ հավաքագրում են միջոցներ այն անօրինական մտադրությամբ կամ այն գիտակցությամբ, որ դրանք ամբողջությամբ կամ մասամբ կօգտագործվեն Ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիայով նախատեսված ահաբեկչական գործողություններ կատարելու համար ահաբեկչական կազմակերպության կամ անհատ ահաբեկչի կողմից:

Բացի վերը նշվածից, ահաբեկչության ֆինանսավորում է համարվում նաև այն անձի ճանապարհորդությունը ֆինանսավորելու նպատակով գույքի ուղղակի կամ անուղղակի, ցանկացած եղանակով տրամադրումը կամ հավաքագրումը, ով ճանապարհորդում է ահաբեկիչներ պատրաստելու համար ուսուցում իրականացնելու կամ դրանց մասնակցելու համար:

Ահազանգ

ՓԼ/ԱՖ մոնիթորինգի համակարգում կարմիր դրոշների նույնականացում: Եթե ահազանգը չի նույնականացվում որպես կեղծ դրական, նախաձեռնվում է վերլուծություն:

Աղբյուր առաջնային

Տեղեկատվության աղբյուր, որն ուղղակիորեն փաստում է ՓԼ/ԱՖ գործունեության կամ դրան առնչվող անձանց ու կազմակերպությունների վերաբերյալ: Առաջնային աղբյուրի օրինակներ են իրական շահառուների ռեեստրը, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց, ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերը, գործարքների վերաբերյալ տվյալները:

Աղբյուր երկրորդային

Տեղեկատվության աղբյուր, որը վերլուծում, ընդհանրացնում կամ վերապատմում է առաջնային աղբյուրներում ներկայացված տեղեկատվությունը: Երկրորդային աղբյուրների օրինակներ են երրորդ կողմի տվյալների շտեմարանները, լրատվամիջոցների հրապարակումները: Առաջնային և երկրորդային աղբյուրների անհամապատասխանությունը կարմիր դրոշ է, որը վկայում է հետաքննության անհրաժեշտության մասին:

ԱՄՆ Հայրենասիրական ակտ (USA Patriot Act)

ԱՄՆ նորմատիվ իրավական ակտ, որը նպատակ է հետապնդում կանխել և պատժել ահաբեկչական գործողություններն ԱՄՆ-ում և ողջ աշխարհում: Այս նպատակին հասնելու ուղիներից է միջազգային փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանը, բացահայտմանը և հետապնդմանն ուղղված ջանքերի ուժեղացումը: Այս համատեքստում Հայրենասիրական ակտը պարտավորեցնում է ֆինանսական հաստատություններին ներդնել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ծրագրեր, հաշվետու լինել կասկածելի գործարքների մասին և հատուկ պատշաճ ուսումնասիրություն իրականացնել օտարերկրյա թղթակցային հաշիվների նկատմամբ: Բացի այդ, ակտը խթանում է ֆինանսական հաստատությունների և իրավապահ մարմինների համագործակցությունը, արգելում կեղծ ընկերությունների մուտքն ԱՄՆ ֆինանսական/տնտեսական համակարգ:

Անվտանգ հանգրվան (Safe Harbour)

Իրավական պաշտպանության շրջանակներ ֆինանսական հաստատությունների համար, որոնք բարեխղճորեն հետևել են ՓԼ/ԱՖ կարգավորման պահանջներին և իրավասու մարմիններին հաշվետվություններ ներկայացրել կասկածելի գործարքների վերաբերյալ: Նման շրջանակները խթանում են ֆինանսական հաստատությունների ներգրավվածությունը ՓԼ/ԱՖ դեմ պայքարին՝ բարելավելով դրանց թափանցիկությունը, իրավական համապատասխանությունը և համագործակցությունը կարգավորող մարմինների հետ:

Առաքման ուղիներ

Ուղիներ, որոնցով ընկերությունը հաճախորդներին մատակարարում է ապրանքներ ու ծառայություններ: Ապրանքների և ծառայությունների մատակարարման միջնորդավորված, հեռավար և ավտոմատացված եղանակները (երրորդ կողմերից կախվածություն, հաճախորդների հեռավար ներգրավում, առցանց ծառայություններ) կարող են ՓԼ/ԱՖ ռիսկերի նկատմամբ ավելի խոցելի լինել, քան հաճախորդների հետ անմիջական և առերես հաղորդակցությունն ու գործարքների իրականացումը:

Առերևույթ (ֆրոնտ) ընկերություն

Ընկերություն, որն արտաքուստ օրինական է թվում, սակայն իրականում ստեղծված է ապօրինի գործունեությունը թաքցնելու կամ դրան աջակցելու նպատակով: Ի տարբերություն օրինական բիզնեսի, ֆրոնտ ընկերությունների համար առևտրային գործունեությունը երկրորդային նշանակություն ունի:

Արժույթ վիրտուալ

Արժեքի թվային ներկայացում, որն օգտագործողների համաձայնությամբ և շրջանակներում գործում է որպես փոխանակման, վճարման, հաշվառման կամ արժեքի պահպանման միջոց: Վիրտուալ արժույթների օրինական օգտագործումն ապահովում է մի շարք առավելություններ, ներառյալ՝ վճարումների արդյունավետություն, ծախսարդյունավետություն, ընդլայնված հասանելիություն:

Միաժամանակ, դրանց թողարկումը և շրջանառությունը բովանդակում է էական ՓԼ/ԱՖ ռիսկեր, ինչպիսիք են.

- ❖ Գործարքների մասնակիցների սահմանափակ նույնականացումը և ստուգումը,
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարում համապատասխանության, վերահսկողության և մոնիթորինգի համար պատասխանատվության բացակայությունը,
- ❖ Կարգավորումների բացակայությունը:

Արտատարաձեռնություն

Պետության իրավասություն մշակել օրենքներ, կանոնակարգեր, վարքագծի այլ կանոններ և ապահովել դրանց իրականացումն ու իրավակիրարկումն իր տարածքից դուրս գտնվող անձանց, գույքի կամ գործունեության նկատմամբ: ԱՄՆ-ն հիմնական պետությունն է, որը պատժամիջոցների իր շրջանակում կիրառում է արտատարաձեռնությունը: ԵՄ-ն համարում է, որ նման գործելաոճը խախտում է միջազգային իրավունքը, ուստիև չի ճանաչում իր պատժամիջոցների արտատարաձեռնությունը:

Արտարժույթի մաքսանենգություն (Money Muling)

Փողերի լվացման մեթոդ, որի դեպքում միջոցներն արտահանվում, ներմուծվում, տեղափոխվում են ապօրինաբար՝ շրջանցելով մաքսային հսկողությունը կամ կեղծելով մաքսային փաստաթղթերը կամ չհայտարարագրելով կամ ոչ իր անվամբ հայտարարագրելով միջոցները:

Բ

Բանկային անհատականացված ծառայություններ

Անհատականացված ֆինանսական ծառայություններ և ապրանքներ, որոնք առաջարկվում են խոշոր և գերխոշոր կապիտալ ունեցող հաճախորդներին: Այն ենթադրում է հարստության կառավարման (wealth management) ծառայությունների լայն շրջանակ, ներառյալ՝ ներդրումներ և պորտֆելի կառավարում, հարկային ծառայություններ, ապահովագրություն և ակտիվների պլանավորում:

Բանկային գաղտնիք

Բանկերի իրավական պարտավորություն չբացահայտել հաճախորդի հաշվի մասին ցանկացած տեղեկատվություն կամ նույնիսկ դրա գոյությունը՝ առանց հաշվի տիրոջ համաձայնության:

Համաձայն «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի՝ բանկային գաղտնիք են համարվում բանկի հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հոգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ:

Բանկային գաղտնիքի մասին ակտ

Փողերի լվացման դեմ պայքարին ուղղված ԱՄՆ հիմնական օրենք, որն ուժի մեջ է մտել 1970թ.-ին և էականորեն փոփոխվել 2001թ.-ին: Ի թիվս այլ հիմնադրույթների, դրանում ամրագրված են ֆինանսական հաստատությունների և մի շարք ընկերությունների կողմից փողերի լվացման նկատմամբ հսկողության միջոցներ, ներառյալ՝ տարբեր ֆինանսական գործարքների համար հաշվետվությունների ներկայացման և հաշվառման պարտավորություններ:

Բանկային վերահսկողության Բազելի հանձնաժողով

G10 երկրների կենտրոնական բանկերի նախագահների կողմից 1974թ.-ին հիմնադրված կառույց, որը սահմանում է բանկային գործունեության կարգավորման միասնական գլոբալ չափորոշիչներ և մեթոդաբանություն, ինչպես նաև ապահովում համագործակցության կանոնավոր հարթակ: Դրա 45 անդամները ներկայացնում են 28 երկրների կենտրոնական բանկեր և բանկերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններ:

Բացառությունների ցուցակ

Ֆինանսական հաստատության կողմից կազմված հաճախորդների ցուցակ, որոնք ազատված են շարունակական պատշաճ ուսումնասիրությունից: Որպես կանոն, սա պայմանավորված է նրանով, որ նրանց գործունեությունը նախկինում նույնականացվել է որպես կեղծ դրական ահազանգ կամ չի բովանդակել կասկածելի տարրեր:

Բոյկոտ

Ի նշան բողոքի և պատժելու նպատակով կառավարության, կազմակերպության կամ անհատի հետ գործարար կամ սոցիալական հարաբերությունների դադարեցում:

Գ

Գաղտնիություն

Փաստերի, տվյալների և տեղեկատվության պահպանում հրապարակային կամ չարտոնված հասանելիությունից:

Դ

Դրամական ծառայություններ մատուցող կազմակերպություն

Ոչ բանկային ֆինանսական հաստատություն, որն իրականացնում է դրամական միջոցների փոխանցում, փոխանակում կամ փոխարկում: Ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարի ցանցը (FinCEN) առանձնացնում է դրամական ծառայությունների հետևյալ հիմնական տեսակները՝

- ❖ արտարժույթի դիլերություն,
- ❖ չեկի կանխիկացում,
- ❖ դրամական միջոցների փոխանցում,
- ❖ ճամփորդական չեկերի, վճարման հանձնարարականների կամ կանխավճարային քարտերի թողարկում,

- ❖ ճամփորդական չեկերի, վճարման հանձնարարականների կամ կանխավճարային քարտերի վաճառք կամ մարում:

Ե

Եվրախորհրդի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի փորձագետների հանձնախումբ (ՄԱՆԻՎԱԼ)

Եվրոպայի խորհրդի մշտական մոնիթորինգային մարմին, որը գնահատում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հիմնական միջազգային չափորոշիչներին ՖԱԹՖ անդամ չհանդիսացող երկրների համապատասխանությունը, դրանց իրականացման արդյունավետությունը, ինչպես նաև պատկան մարմիններին առաջարկություններ ներկայացնում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի սեփական համակարգի բարելավման վերաբերյալ: Հանձնախմբի նպատակը ազգային իշխանությունների կարողությունների զարգացումն է՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Եվրոպոլ

ԵՄ իրավապահ մարմին, որի նպատակն է ապահովել ավելի անվտանգ Եվրոպա՝ ի նպաստ բոլոր ԵՄ քաղաքացիների: Փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում Եվրոպոլն անդամ երկրների իրավապահ մարմիններին տրամադրում է գործառնական և վերլուծական աջակցություն կապի սպաների (ELOs), վերլուծաբանների միջոցով, ինչպես նաև առաջատար տվյալների շտեմարանների և հաղորդակցության կապուղիների կիրառմամբ:

Երկակի հսկողություն

Ոչ իրավաչափ գործողությունները կանխելու նպատակով կիրառվող սկզբունք, որը ներքին հսկողության գործընթացում ենթադրում է առնվազն երկու աշխատակցի ներգրավվածություն: Երկակի հսկողությունը ոչ միայն նվազեցնում է չարաշահումների ռիսկը, այլ նաև պաշտպանում է աշխատակիցներին ոչ իրավաչափ մեղադրանքներից:

Երկակի նշանակության ապրանքներ

Առարկաներ, որոնք կարող են օգտագործվել ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական նպատակներով: Որպես կանոն, դրանք բազմաֆունկցիոնալ են, օրինակ՝ հրթիռային տեխնոլոգիաները, որոնք կարող են օգտագործվել թե՛ հետազոտական, թե՛ ռազմական նպատակներով: Համաձայն «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, ՀՀ տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաև երկակի նշանակության տեղեկատվության և մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ հսկողության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ երկակի նշանակության ապրանք է համարվում յուրաքանչյուր տեսակի գույք, որը կիրառվում է քաղաքացիական նպատակների համար և, իր բնույթին ու հատկություններին համապատասխան, կարող է օգտագործվել նաև ռազմական նպատակներով, ներառյալ՝ զանգվածային ոչնչացման զենքի և դրա փոխադրման միջոցների ստեղծման համար:

Երրորդ կողմի տվյալների շտեմարան

Տվյալների ամբողջություն, որը հավաքագրվում և կառավարվում է հաճախորդների կամ գործարար տվյալների սպառողների հետ ուղղակիորեն չփոխազդող կազմակերպությունների կողմից, օրինակ՝ վարկանիշային գործակալություններ, ֆոնդային բորսաներ: Այն կարող է ծառայել և՛ որպես առաջնային, և՛ որպես երկրորդային տեղեկատվության աղբյուր:

2

Ձննման համակարգ ավտոմատացված

Ծրագրային ապահովման համակարգ, որն օգտագործվում է խոշոր ֆինանսական հաստատությունների կողմից՝ զննման գործընթացն ավտոմատացնելու համար: Նման գործիքները հաճախորդների պատշաճ ուսումնասիրության շրջանակներում ահազանգում և նույնականացնում են բարձր ռիսկի չափանիշով բնութագրվող հաճախորդներին և գործարքները:

Է

Էմբարգո

Պետության կողմից այլ պետություն ապրանքների, ծառայությունների, արժույթի և այլ արժեքների ներմուծման կամ արտահանման վրա կիրառվող սահմանափակում: Այն կարող է կիրառվել ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակահատվածում՝ ընդգրկելով առևտրատնտեսական գործունեության բոլոր կողմերը:

Ը

Ըստ ներկայացնողի փոխանցելի գործիք

Փաստաթուղթ, որը երաշխավորում է սահմանված ժամկետում կամ ըստ պահանջի սահմանված չափի գումարի փոխանցում կոնկրետ անձին, վերջինիս որոշմամբ երրորդ անձին կամ փաստաթուղթը ներկայացնող անձին (կրողին), օրինակ՝ մուրհակներ, վճարման հանձնարարականներ:

Թ

Թիրախի համապատասխանեցում

Սուբյեկտի՝ որպես պատժամիջոցների ցուցակում ներառված անձի նույնականացում:

Թղթակից բանկ

Բանկ, որը մեկ այլ բանկի համար բացում, վարում և կառավարում է թղթակցային հաշիվ:

Թղթակցային բանկային հարաբերություններ

Բանկի (թղթակից բանկ) կողմից այլ բանկին (ռեսպոնդենտ բանկ) ծառայությունների մատուցում: Միջազգային խոշոր բանկերը, որպես կանոն, ամբողջ աշխարհում հանդես են գալիս որպես այլ բանկերի թղթակիցներ:

Ռեսպոնդենտ բանկերին կարող է մատուցվել ծառայությունների լայն շրջանակ, այդ թվում՝ կանխիկ կառավարում, միջազգային փոխանցումներ, քլիրինգ, վճարումների իրականացման համար հաշիվների տրամադրում և արտարժույթի փոխանակում:

h

Ինտեգրում (օրինականացում)

Փողերի լվացման դասական գործընթացի երրորդ փուլ, որի միջոցով հանցավոր ճանապարհով ձեռքբերված եկամուտներին օրինական տեսք է հաղորդվում և վերադարձվում հանցագործին: Այս փուլի հիմնական մեթոդներն են օրինական բիզնեսում ներդրումները, պերճանքի առարկաների գնումը, միջոցների փոխանցումը չհամապատասխանող երկիր կամ նմանատիպ այլ գործարքներ, որոնք թույլ են տալիս հանցագործին օգտագործել միջոցները՝ առանց իրավապահ մարմինների մոտ կասկած հարուցելու:

Իրավասու մարմիններ

Պետական կառույցներ, որոնք պատասխանատու են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համար:

Դրանք ներառում են.

- ❖ Ֆինանսական հետախուզության մարմինները,
- ❖ ՓԼ/ԱՖ, հարակից և դրանց նախորդող հանցագործությունների հետաքննմամբ և/կամ քրեական հետապնդմամբ, ինչպես նաև

հանցավոր ակտիվների օտարմամբ/սառեցմամբ, բռնագանձմամբ զբաղվող մարմինները,

- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նկատմամբ վերահսկողություն և մոնիթորինգ իրականացնող մարմինները:

Լիազոր մարմին

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, որը, համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի, ունի հետևյալ իրավասությունները.

- ❖ տեղեկատվության հավաքագրում,
- ❖ տեղեկատվության վերլուծություն,
- ❖ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ինչպես նաև վարույթի հանրային մասնակիցներին ծանուցման տրամադրում,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավական ակտերի (այդ թվում՝ ուղեցույցների, չափանիշների, տիպաբանությունների) ընդունում,

- ❖ հաշվետվություն տրամադրող անձանց նկատմամբ վերահսկողություն (վերահսկողությանն օժանդակում), այդ թվում՝ հանձնարարականների տրամադրում, պատասխանատվության կիրառում, հետադարձ կապի ապահովում,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ֆինանսական հաստատությունների կողմից ներքին աուդիտի իրականացման դեպքերի ու հաճախականության սահմանում,
- ❖ կասկածելի գործարքների կասեցում, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման հետ կապված անձանց գույքի սառեցում,
- ❖ ահաբեկչության հետ կապված անձանց, ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում չհամապատասխանող երկրների (տարածքների) ցանկերի հրապարակում,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում հանրային իրազեկման իրականացում,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում ուսուցում, ներքին դիտարկումների մարմինների աշխատակիցների որակավորում,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում միջազգային կառույցների և ֆինանսական հետախուզության օտարերկրյա մարմինների հետ համագործակցություն:

Օրենքի նպատակներից ելնելով՝ լիազոր մարմնում գործում է պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը (ՖԴԿ), որը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի հաստատած կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա իրականացնում է լիազոր մարմնի համար սահմանված իրավասությունները՝ բացառությամբ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդին և ՀՀ կենտրոնական բանկի նախագահին վերապահվածների:

Խ

Խաղանիշերի կամ խաղարկային միավորների ձեռքբերմամբ և վճարային փաստաթղթի միջոցով փողերի լվացում

Իրավիճակ, երբ կանխիկով կամ խաղատան անհատական հաշվի միջոցներով գնվում են խաղանիշեր կամ խաղարկային միավորներ, որոնք փոխանակվում են խաղատան կողմից դուրս գրված վճարային միջոցներով կամ կանխիկով: Սա հնարավորություն է տալիս ձերբազատվել հետագծելի սերիական համարներից և օգտագործել ստացված միջոցներն այլ ապօրինի գործողություններում:

Ծ

Ծուղակ-օպերացիա

Քննչական մարտավարություն, որի ժամանակ հանցավոր վարքագծի ապացույցներ ձեռք բերելու նպատակով գաղտնի գործակալները ձևանում են հանցագործներ: Սա արդյունավետ միջոց է հանցագործներին բացահայտելու, հանցավոր կազմակերպություններ ներթափանցելու և փողերի լվացման դեպքեր հայտնաբերելու համար:

Կ

Կանխիկի ինտենսիվ շրջանառությամբ բիզնես

Ցանկացած բիզնես, որի հաճախորդներն ապրանքների կամ ծառայությունների համար վճարումները սովորաբար կատարում են կանխիկով, օրինակ՝ ռեստորաններ, առաքման ծառայություններ, տաքսի ծառայություններ, մետաղադրամով աշխատող մեքենաներ կամ մեքենաների վերանորոգման արհեստանոցներ: Նման բիզնեսը կարող է հնարավորություն տալ տեղաբաշխել ապօրինի բիզնես գործառնությունների արդյունքում ձեռքբերված միջոցները:

Կառուցվածքավորում (Smurfing)

Փողերի լվացման մեթոդ, որը կատարվում է անօրինական ճանապարհով ձեռք բերված միջոցները թվային կամ ֆիզիկական փոքր գումարների բաժանելու միջոցով՝ խուսափելով դրանց հայտարարագրումից և ընդհանուր առմամբ բացահայտումից:

Կասկածելի ակտիվություն

Հաճախորդի ոչ բնական կամ խնդրահարույց վարքագիծ կամ գործունեություն, որը կարող է կապված լինել փողերի լվացման, ահաբեկչության ֆինանսավորման կամ քրեորեն պատժելի այլ արարքի հետ:

Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն

Գործարք կամ գործարար հարաբերություն, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

Կարմիր դրոշ

Ահազանգ կամ նախազգուշացնող ազդանշան, որն ուշադրություն է հրավիրում հնարավոր կասկածելի իրավիճակի, գործարքի կամ գործունեության վրա:

Կեղծ բանկ

Բանկ, որը, հիմնադրված, գրանցված, լիցենզավորված կամ այլ կերպ ինկորպորացված լինելով որևէ երկրում, իրականում դրա տարածքում չի կառավարվում կամ չունի փաստացի գտնվելու կամ գործունեության վայր, և որը փոխկապակցված չէ արդյունավետ համախմբված վերահսկողության ենթակա, կարգավորվող գործունեություն իրականացնող ֆինանսական հաստատությունների որևէ խմբի հետ:

Կեղծ բացասական արդյունք

ՓԼ/ԱՖ մոնիթորինգի շրջանակներում փաստացի ՓԼ/ԱՖ ռիսկի չնույնականացում կամ անտեսում: Նման դեպքերը վտանգում են կազմակերպության ֆինանսական կայունությունը, հեղինակությունը և հանգեցնում իրավական պատասխանատվության:

Կեղծ գործարք (Sham Transaction)

Կողմերի գործողություններ կամ նրանց միջև կնքված փաստաթղթեր, որոնք նախատեսված են արտաքուստ ցուցադրել կողմերի միջև ձևավորված փաստացի իրավունքներից և պարտականություններից տարբերվող իրավունքներ և պարտականություններ:

Կեղծ դրական արդյունք

ՓԼ/ԱՖ մոնիթորինգի շրջանակներում իրավաչափ գործարքի նույնականացում որպես կասկածելի և ռիսկային: Նման դեպքերը հանգեցնում են գործառնական ծախսերի ավելացման, համապատասխանության ստորաբաժանման ծանրաբեռնման, իրավաչափ գործարքների հետաձգման, հաճախորդների դժգոհության և գործարար հնարավորությունների կորստի:

Կեղծ (շեյ) ընկերություն

Ընկերություն, որը գոյություն ունի որպես իրավաբանական անձ միայն թղթի վրա: Այս ընկերությունները չունեն ֆիզիկական ակտիվներ, աշխատակազմ և չեն իրականացնում բիզնես գործառնություններ:

Շել ընկերությունները հաճախ օգտագործվում են օրինական նպատակներով, ինչպիսիք են հարկային պլանավորումը, միաձուլումը և միացումը, ակտիվների պահպանումը: Այնուամենայնիվ, դրանց կողմից իրական բիզնես գործառնությունների չիրականացումը բարձրացնում է դրանց խոցելիությունն ապօրինի շահագործման, մասնավորապես՝ փողերի լվացման և հարկերի շրջանցման առումով:

Կոնվենցիա Պալերմոյի

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի 2000թ. -ի կոնվենցիա, որը մասնակից պետություններին պարտավորեցնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացումը դիտարկել որպես հանցագործություն, միաժամանակ որպես նախորդող հանցակազմ առաջարկում է դիտարկել բոլոր ծանր հանցագործությունները: Պալերմոյի կոնվենցիան անդրադառնում է նաև դատական համագործակցության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների բռնագրավման, վկաների և տուժողների պաշտպանության հարցերին: Հայաստանի Հանրապետությունը Պալերմոյի կոնվենցիային միացել է 2003թ. -ին:

Կոնվենցիա Ստրասբուրգի

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման մասին» Եվրոպայի խորհրդի 1990թ. -ի կոնվենցիա, որի միջոցով միջազգային իրավական համակարգում առաջին անգամ ամբողջական և համակարգված կարգավորում է ստացել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը:

Կոնվենցիա Վարշավայի

Ստրասբուրգի կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ներպետական մակարդակում քրեաիրավական միջոցներ ձեռնարկել հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի և այդ եկամուտների բռնագրավման, ինչպես նաև քրեական գործերի քննության ընթացքում միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետությունը Ստրասբուրգի կոնվենցիային միացել է 2003թ. -ին:

«Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի 2005թ. -ի կոնվենցիա, որը, ըստ էության, Ստրասբուրգի կոնվենցիայի կատարելագործված խմբագրությունն է: Այն ավելի ընդլայնում է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարի քրեաիրավական կանխարգելիչ միջոցները:

Վարշավայի կոնվենցիան կարգավորում է ահաբեկչության ֆինանսավորման, ներպետական մակարդակում ձեռնարկվող միջոցառումների, միջազգային համագործակցության, մոնիթորինգի մեխանիզմների, վեճերի լուծման հետ կապված հարցերը: Վարշավայի կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 2008թ. -ին:

Կոնվենցիա Վիեննայի

«Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» ՄԱԿ-ի 1988թ.-ի կոնվենցիա, որը թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը կանխելու նպատակով նախատեսում է միջազգային իրավական համալիր միջոցառումների անցկացում և որպես դրանց բաղկացուցիչ մաս միջազգային մակարդակում առաջին անգամ ճանաչել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարը: Վիեննայի կոնվենցիան մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց օրենսդրությամբ քրեականացնել թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի հետ կապված հանցագործությունների արդյունքում ստացված եկամուտների օրինականացումը: Հայաստանի Հանրապետությունը Վիեննայի կոնվենցիային միացել է 1993թ.-ին:



Հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն

Ներքին հսկողության կառուցակարգերի ամբողջություն, որը հնարավորություն է տալիս կազմակերպությանը պարզել հաճախորդի ինքնությունը, հարաբերական վստահությամբ կանխատեսել այն գործարքների տեսակներն ու բնույթը, որոնց հաճախորդը կարող է մասնակցել, և գնահատել, թե որքանով է ռիսկային հաճախորդի հետ համագործակցությունը:

Խարդախությունից պաշտպանվելու և նորմատիվ իրավական պահանջներին համապատասխանություն ապահովելու համար կազմակերպությունները պետք է ճանաչեն իրենց հաճախորդներին: Հաճախորդների պատշաճ ուսումնասիրության արդյունավետ ծրագրերն օգնում են պաշտպանել կազմակերպության հեղինակությունը՝ նվազեցնելով վերջինիս՝ ֆինանսական/տնտեսական հանցագործության միջոց կամ զոհ դառնալու հավանականությունը: Նման ծրագրերը ռիսկերի կառավարման գործուն համակարգի էական բաղադրիչն են:

Համաշխարհային բանկ

Միջազգային ֆինանսական կազմակերպությունների խումբ, որի նպատակը ծայրահեղ աղքատության վերացումն է և երկրների ընդհանուր բարեկեցությանն ու բարգավաճմանն աջակցումը: Խումբը Արժույթի միջազգային հիմնադրամի և միջազգային փորձագետների հետ համագործակցությամբ մշակել է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային չափորոշիչներին երկրի համապատասխանության գնահատման մեթոդաբանություն:

Հայելային առևտուր

Առևտրի մեթոդ, որը ներդրողներին հնարավորություն է տալիս ընդօրինակել փորձառու ներդրողների գործելաոճը և կատարել նույնական գործարքներ: Հայելային առևտուրն առավել լայն տարածում ունի արտարժույթի շուկաներում:

Հանցագործություն նախորդող

Հատկորոշված ապօրինի գործողություններ, որոնք կարող են քրեական հետապնդում հարուցել փողերի լվացման հիմքով: ՖԱԹՖ-ի կողմից սահմանվել է նախորդող հանցագործությունների հետևյալ ցանկը՝

- ❖ մասնակցություն կազմակերպված հանցավոր խմբում և բռնաշորթմանը,
- ❖ ահաբեկչություն, այդ թվում՝ ահաբեկիչների ֆինանսավորում,
- ❖ մարդկանց թրաֆիքինգ և միգրանտների ապօրինի ներմուծում,
- ❖ սեռական շահագործում, այդ թվում՝ երեխաների սեռական շահագործում,
- ❖ թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառություն,
- ❖ զենքի ապօրինի շրջանառություն,
- ❖ գողացված և այլ ապրանքների ապօրինի շրջանառություն,
- ❖ կոռուպցիա և կաշառակերություն,
- ❖ խարդախություն,
- ❖ արժույթի կեղծում,
- ❖ ապրանքների կեղծում և ապրանքահենություն,

- ❖ բնապահպանական հանցագործություններ (օրինակ՝ վայրի կենդանական և բուսական աշխարհի պահպանվող տեսակների, թանկարժեք մետաղների և քարերի, այլ բնական ռեսուրսների կամ թափոնների հանցավոր ձեռքբերում, արդյունահանում կամ առևտուր),
- ❖ սպանություն, ծանր մարմնական վնասվածք,
- ❖ առևանգում, ազատության ապօրինի սահմանափակում և պատանդներ վերցնել, կողոպուտ կամ գողություն,
- ❖ մաքսանենգություն (այդ թվում՝ մաքսային և ակցիզային վճարների ու տուրքերի հետ կապված),
- ❖ հարկային հանցագործություններ (ուղղակի և անուղղակի հարկերի հետ կապված),
- ❖ շորթում,
- ❖ փաստաթղթերի կեղծում,
- ❖ ծովահենություն, և
- ❖ ինսայդերական գործունեություն և շուկայի չարաշահում:

Հանցագործություններից ստացված եկամուտներ

Ցանկացած գույք, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեռք է բերվել կամ ստացվել որևէ հանցավոր գործունեության հետևանքով:

Հաշիվ կենտրոնացման

Տարբեր աղբյուրներից ստացվող միջոցները մեկում համախմբելու նպատակով օգտագործվող հաշիվ: Նման հաշիվներն օգտագործվում են ներքին գործարքների նախապատրաստման և իրականացման շրջանակներում:

Թեև դրանք ապահովում են միջոցների արդյունավետ և դյուրին տեղաշարժ, փողերի լվացման ռիսկերը կարող են ծագել թափանցիկության բացակայության պատճառով:

Հաշիվ տարանցիկ/միջանցիկ

Թղթակցային հաշիվ, որը հնարավորություն է տալիս ռեսպոնդենտ բանկի հաճախորդներին ուղղակիորեն կամ ենթահաշիվների միջոցով կատարել գործարքներ: Նման հաշիվներն էական ՓԼ/ԱՖ ռիսկեր են բովանդակում թղթակից բանկի համար՝ ռեսպոնդենտ բանկի հաճախորդների պատշաճ ուսումնասիրության բարդությամբ պայմանավորված:

Հաշվետվություն տրամադրող անձ

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց թվին դասվում են՝

- ❖ ֆինանսական կազմակերպությունները,
- ❖ ոչ ֆինանսական կազմակերպությունները (ներառյալ՝ որոշ դեպքերում անհատ ձեռնարկատերերը),
- ❖ պետական մարմինները:

Հաշվետվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններն են՝

- ❖ բանկերը,
- ❖ վարկային կազմակերպությունները,
- ❖ արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձինք,

- ❖ դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձինք,
- ❖ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձինք,
- ❖ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով նախատեսված Կենտրոնական դեպոզիտարիան,
- ❖ ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունները և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձինք,
- ❖ ներդրումային ֆոնդի կառավարիչները և ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձինք, այդ թվում՝ ներդրումային ֆոնդերի կառավարման հետ կապված հարաբերությունների մասով,
- ❖ գրավատները:

Հաշվետվություն տրամադրող ոչ ֆինանսական կազմակերպություններն են՝

- ❖ ռիելթորական գործունեություն իրականացնող անձինք,
- ❖ նոտարները,
- ❖ փաստաբանները, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք,
- ❖ անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք,

- ❖ աուդիտորական կազմակերպությունները և աուդիտորները,
- ❖ թանկարժեք մետաղների դիլերները,
- ❖ թանկարժեք քարերի դիլերները,
- ❖ արվեստի գործերի դիլերները,
- ❖ սակարկությունների կազմակերպիչները,
- ❖ խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի կազմակերպիչները,
- ❖ հավատարմագրային կառավարման և իրավաբանական անձանց գրանցման ծառայություններ մատուցող անձինք:

Հաշվետվություն տրամադրող այլ անձինք են՝

- ❖ վարկային բյուրոն՝ միայն հաշվառման և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով,
- ❖ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազոր մարմինը՝ միայն հաշվառման, պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով,

- ❖ իրավաբանական անձանց գրանցող պետական մարմինը՝ պետական ռեգիստրը՝ միայն հաշվառման և պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվությունների տրամադրման պարտականությունների և դրանց խախտման համար օրենքով սահմանված պատասխանատվության մասով:

Հավալա

Փոխադարձ վստահության վրա հիմնված այլընտրանքային փոխանցումների համակարգ, որը տարածված է Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հնդկական թերակղզում: Գործընթացը չի ենթադրում դրամական միջոցների ֆիզիկական տեղաշարժ: Հաճախորդը գումար է տալիս իր երկրում գործող Հավալայի գործակալին՝ այլ երկրում ստացողին փոխանցելու նպատակով: Գործակալը կապ է հաստատում ստացողի երկրում գտնվող գործակալի հետ, որից հետո վերջինս սահմանված չափի գումարը հանձնում է ստացողին՝ առանց այդ նպատակով նախապես դրամական միջոցներ ստանալու: Գործընթացն արագ է, հաճախ ավարտվում է մեկ օրվա ընթացքում և սովորաբար առաջարկում ավելի շահավետ փոխարժեքներ, քան բանկերը: Գործընթացը բովանդակում է էական ՓԼ/ԱՖ ռիսկեր:

Հատուկ նշանակված քաղաքացիների և արգելափակված անձանց ցուցակ

ԱՄՆ Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակի (ՕԱՎԳ) կողմից վարվող ցուցակ, որը ներառում է ԱՄՆ ազգային անվտանգության համար սպառնալիք ներկայացնող անձանց, որոնց հետ գործարար համագործակցությունն արգելվում է:

Հետահայաց վերանայում

Նախորդ ժամանակահատվածում հաճախորդի կողմից իրականացված գործարքների վերանայման գործընթաց: Նման վերանայումը թույլ է տալիս հավաստել հաճախորդի իրական գործունեությունը և բացահայտել գործարքները, որոնք կարող են կրել անսովոր կամ կասկածելի բնույթ և պահանջել հավելյալ ուսումնասիրություն:

Հետաքննություն

Ֆիզիկական կամ իրավաբանական անձի մասին տեղեկատվության ձեռքբերման, գնահատման, փաստաթղթավորման և պահպանման գործընթաց՝ ի պատասխան կասկածելի ակտիվության վերաբերյալ ահազանգի: Հետաքննությունները հաճախ սկսվում են պարզ ստուգումներից, որոնց կարող է հաջորդել առավել մանրակրկիտ ուսումնասիրություն:

Հսկողության արդյունավետություն

Ներքին գործարար ռիսկերի մեղմմանը միտված վերահսկողության կառուցակարգերի որակի գնահատում: Այս կառուցակարգերի արդյունավետությունը կախված է ռիսկերի մակարդակին դրանց համապատասխան և համարժեք լինելուց:



«Ճանաչի՛ր աշխատակցիդ»

Փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք նպատակ ունեն բացահայտել աշխատակցի կամ հնարավոր թեկնածուի ինքնությունը, նախկինում դրսևորած հանցավոր և կասկածելի գործունեությունը, ինչպես նաև գնահատել նրա համապատասխանությունն իր կողմից զբաղեցվող կամ զբաղեցվելիք պաշտոնին:

«Ճանաչի՛ր հաճախորդիդ»

Փողերի լվացման դեմ պայքարի քաղաքականություններ և ընթացակարգեր, որոնք նպատակ ունեն բացահայտել հաճախորդի ինքնությունը, գործունեության բնույթը, հավաստել միջոցների օրինականությունը և գնահատել նրա հետ համագործակցության ռիսկայնությունը ՓԼ/ԱՖ համատեքստում:

Մ

Միավորված ազգերի կազմակերպություն

Միջազգային կազմակերպություն, որը միավորում է համագործակցության և հավաքական անվտանգության միջոցով խաղաղության պահպանման հանձնառություն ստանձնած պետություններին: Ներկայումս աշխարհի գրեթե բոլոր պետությունները ՄԱԿ-ի անդամ են: ՄԱԿ-ը նպաստում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարին այնպիսի նախաձեռնությունների միջոցով, ինչպիսին է Փողերի լվացման դեմ պայքարի գլոբալ ծրագիրը: Վերջինս աջակցում է անդամ պետություններին ՓԼ/ԱՖ դեմ պայքարի արդյունավետ և համապարփակ նորմատիվ իրավական շրջանակներ մշակելու, ինչպես նաև դրանց պատշաճ իրականացումն ապահովելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքներ ներդնելու և կարողություններ զարգացնելու հարցում: Ծրագիրը խթանում է նաև ՓԼ/ԱՖ դեմ պայքարում ազգային ջանքերի համակարգվածությունը, տարածաշրջանային և միջազգային համագործակցությունը:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1373 (2001) բանաձև

ՄԱԿ-ի կողմից 2001թ. -ին ընդունված բանաձև, որը դրեց ահաբեկչության դեմ պայքարում միասնական և համապարփակ մոտեցման հիմքերը: Բանաձևը պարտավորեցնում է անդամ պետություններին ներդնել համապատասխան նորմատիվ իրավական շրջանակներ և կառուցվածքներ, որոնք ուղղված են ահաբեկչության ճնշմանը և կանխմանը:

Ավելին, վերջիններս պարտավորվում են առավելագույնս աջակցել միմյանց ահաբեկչության ֆինանսավորման վերաբերյալ հետաքննությունների և դատավարության ընթացքում:

Մասնակի համընկնում

Ավտոմատացված զննման համակարգի կողմից գեներացված արդյունք, որը փաստում է բարձր ռիսկի չափանիշով բնութագրվող անձի և զննման սուբյեկտի նմանության մասին: Մասնակի համընկնումը հիմնականում պայմանավորված է սուբյեկտների տվյալների նույնությամբ/նմանությամբ և համընկնման ճշգրտությունը պարզելու համար պահանջում է մարդկային միջամտություն:

Մարդկանց թրաֆիքինգ

Հանցավոր գործունեություն, որը կազմված է հետևյալ բաղադրիչներից.

- ❖ **Գործողություն.** անձի շահագործմանը նպաստելու նպատակով հանցավոր ցանցի կողմից իրականացված գործողություն, ներառյալ՝ հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, պահում կամ ընդունում:
- ❖ **Միջոցներ.** թրաֆիքինգի իրականացման եղանակներ, ներառյալ՝ սպառնալիքի կամ ուժի գործադրում, հարկադրանքի որևէ այլ ձևի կիրառում, առևանգում, խարդախություն, խաբեություն, պաշտոնական դիրքի կամ խոցելի վիճակի չարաշահում:
- ❖ **Շահագործում.** անձի նկատմամբ բռնության իրականացում՝ ի շահ երրորդ կողմի:

Նշված տարրերից յուրաքանչյուրը կազմված է բազմաթիվ գործողություններից: Սակայն յուրաքանչյուրին համապատասխան որևէ գործողության իրականացումը փաստում է մարդկանց թրաֆիքինգի մասին:

Մարդու իրավունքներ

Հիմնարար իրավունքներ, որոնցով օժտված է յուրաքանչյուր ոք՝ անկախ ռասայից, սեռից, ազգությունից, էթնիկ պատկանելությունից, լեզվից, կրոնից կամ այլ կարգավիճակից: Անհատների սոցիալական, մշակութային, ֆինանսական և քաղաքական իրավունքները պաշտպանելու նպատակով 1948թ.-ին ընդունվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Հռչակագիրը բաղկացած է 30 հոդվածներից: Այն «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրերի հետ համարվում է Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը: Հռչակագիրը պայմանագիր չէ, ուստի իրավաբանորեն պարտավորեցնող չէ, ունի խորհրդատվական բնույթ:

Միգրանտների ապօրինի ներմուծում

Անձի կամ անձանց ապօրինի տեղափոխությանը կամ սահմանների ապօրինի հատմանն աջակցում: Ապօրինի ներմուծման և թրաֆիքինգի հիմնական տարբերությունն այն է, որ ներմուծումը խախտում է այն երկրի օրենքները, որտեղ տեղի է ունենում ապօրինի մուտքը, մինչդեռ թրաֆիքինգը՝ մարդու իրավունքները:

Միգրանտների ապօրինի ներմուծումը ենթադրում է.

- ❖ օտարերկրացու կամ ոչ ռեզիդենտի այլ երկիր ապօրինի մուտքին աջակցում.
- ❖ կեղծ փաստաթղթերի պատրաստում կամ տրամադրում.
- ❖ ապօրինի մշտական բնակության թույլտվության տրամադրում:

Չնայած այս երևույթները տարբեր են, դրանք հաճախ փոխկապակցված են, քանի որ ապօրինի ներմուծումն անձին թրաֆիքինգի նկատմամբ դարձնում է խոցելի:

Միջուկային զենքը չտարածելու մասին պայմանագիր

ՄԱԿ-ի 1968թ. -ի պայմանագիր, որն ամրագրում է ստորագրող երկրների հանձնառությունը՝ կանխելու միջուկային զենքի տարածումը, խթանելու միջուկային էներգիայի խաղաղասիրական նպատակներով օգտագործումը և աջակցելու միջուկային, ինչպես նաև ընդհանուր և լիարժեք զինաթափմանը: Պայմանագրին Հայաստանի Հանրապետությունը միացել է դեռևս 1991թ.-ին:

Մոնիթորինգ

Հաճախորդների գործարքների մոնիթորինգ, ներառյալ՝ գործարքների վերաբերյալ պատմական և ընթացիկ տեղեկատվության գնահատում և համադրում՝ հաճախորդների գործունեության ամբողջական պատկերը ստանալու, մասնավորապես՝ հանցավոր գործունեության ռիսկերը բացահայտելու և մեղմելու նպատակով:

Մոնիթորինգ՝ իրադարձությամբ պայմանավորված

Հաճախորդի վերաբերյալ տեղեկատվության փոփոխության դեպքում մոնիթորինգի իրականացում:

3

Յուրացում

Վստահված միջոցների և/կամ ակտիվների նպատակաուղղված գողություն, պահպանում կամ չարաշահում:

Լ

Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակներ և մասնագիտություններ

Անձինք, որոնք գործում են ավանդական ֆինանսական հատվածից դուրս, սակայն խոցելի են ՓԼ/ԱՖ ռիսկերի նկատմամբ: Համաձայն ՖԱԹՖ դասակարգման՝ այդպիսիք են՝

- ❖ խաղատները,
- ❖ անշարժ գույքի գործակալները,
- ❖ թանկարժեք մետաղների և քարերի դիլերները,
- ❖ փաստաբանները, նոտարները, իրավաբանական ծառայություններ մատուցող այլ անկախ մասնագետները և հաշվապահները,

- ❖ տրաստային և ընկերությունների ներկայացման ծառայություններ մատուցողները, որոնք նախապատրաստում կամ իրականացնում են որոշակի պարտավորություններ իրենց հաճախորդների անունից:

ՓԼ/ԱՖ ռիսկերի նկատմամբ իրենց խոցելիության պատճառով ՖԱԹՖ Հանձնարարականները խորհուրդ են տալիս թվարկված սուբյեկտների նկատմամբ ներդնել հաճախորդների պատշաճ ուսումնասիրության, տեղեկատվության պահպանման և հաշվետվողականության չափանիշներ:

Ներքին դիտարկումների մարմին

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ հաշվետվություն տրամադրող անձի ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթներ իրականացնող ստորաբաժանում կամ աշխատակից, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձ, որն իր գործառույթներն իրականացնում է միանձնյա: Ներքին դիտարկումների մարմինն առնվազն՝

- ❖ ապահովում է հաշվետվություն տրամադրող անձի անունից լիազոր մարմնին տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի կապը լիազոր մարմնի հետ,
- ❖ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության բացահայտման նպատակով իրականացնում է վերլուծություններ և պահպանում է դրանց արդյունքները,
- ❖ ապահովում է հաճախորդի և գործարքի կամ գործարար հարաբերության ռիսկի գնահատումը,

- ❖ գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու հարցը, ըստ անհրաժեշտության, քննարկում է ներքին ազդակ տրամադրած համապատասխան աշխատակցի հետ,
- ❖ վերջնական որոշում է կայացնում գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի որակելու, կասեցնելու, իրականացումը մերժելու կամ դադարեցնելու, ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքը սառեցնելու վերաբերյալ,
- ❖ ՓԼ/ԱՖ կանխարգելման հետ կապված գործառույթների իրականացման հարցում օժանդակում և խորհրդատվություն է տրամադրում ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու այլ աշխատակիցներին:

Շ

Շահառու իրական

Ֆիզիկական անձ, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է:

Իրավաբանական անձի իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

- ա.** ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսեր, փայեր) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,
- բ.** տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,
- գ.** հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի **«ա»** և **«բ»** ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Շերտավորում

Գործառնություններ, որոնք նպատակ են հետապնդում հանցավոր եկամուտները հեռացնել դրանց ծագման աղբյուրից՝ վերջինիս բացահայտումը դժվարացնելու համար: Սովորաբար դա իրականացվում է անդրսահմանային ֆինանսական գործարքների միջոցով՝ օգտագործելով «մասնագիտացված» օֆշորային բանկեր կամ օֆշորային գոտիներում գրանցված/գործող (հաճախ գրպանային) ընկերություններ:

Շրջանցում

Պատժամիջոցներից խուսափում կամ խուսանավում:

Շրջանցում արտաքին

Պատժամիջոցների խախտում՝ առանց ֆինանսական հաստատության հետ համագործակցության կամ դրա իմացության:

Շրջանցում ներքին

Ֆինանսական հաստատության կողմից պատժամիջոցների խախտում կամ դրանց խախտմանն աջակցում:

Ո

Ողջամիտ պատճառ

Հանգամանք, որի հիման վրա ազնիվ և ողջամիտ անձը կարող է ենթադրել կամ եզրակացնել ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման մասին:

Ղ

Չհամապատասխանող երկիր կամ տարածք

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ լիազոր մարմնի հրապարակած ցուցակներին համապատասխան՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները չկիրառող կամ ոչ պատշաճ կիրառող արտասահմանյան երկիր կամ տարածք:



Պահառու

Կազմակերպություն, որը պատասխանատու է հաճախորդի անունից վերջինիս ակտիվների անվտանգությունը, ներառյալ՝ խարդախության ու գողության ռիսկերից պաշտպանությունը, և կառավարումն ապահովելու համար:

Պահառություն

Հաճախորդների ակտիվների պաշտպանությանը և կառավարմանն ուղղված գործունեություն:

Պայմանագիր

Պայմանագրի կողմերից յուրաքանչյուրը միմյանց համար:

Պաշտպանության 3 գծերի մոդել

Կառավարման մոդել, որն ուղղված է կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման ռազմավարության օպտիմալացմանը: Այն ձգտում է կազմակերպության ներսում հստակեցնել ռիսկերի կառավարման հիմնական պատասխանատուների դերերը, սահմանել նրանց պարտականությունները:

Մոդելը պարզեցնում է պատասխանատուների դերերը հետևյալ երեք մակարդակներում.

Առաջին գիծը ներկայացված է առաջնագծի աշխատակիցներով, որոնց է վստահված ընթացիկ գործունեությանն առնչվող ռիսկերի բացահայտումը և կառավարումը:

Նրանք գործում են որպես ընկերության ռիսկերի կառավարման ծրագրի ակտիվ դերակատար, որը պարտավոր է պահպանել վերահսկողության միջոցները և ռիսկերը նվազագույնի հասցնելու համար կիրառվող քաղաքականությունն ու ռազմավարությունը: Այս գծի պատասխանատուները գտնվում են գործադիր մարմնի ենթակայության տակ և հաշվետու են վերջինիս:

Երկրորդ գիծը մասնագիտացված գործառույթների գիծն է, որն ապահովում է համապատասխանությունը և ռիսկերի արդյունավետ կառավարումը: Երկրորդ գծի կարևորագույն պարտականություններից է առաջին գծին ուղղորդելը՝ ռիսկերի կառավարման շրջանակի և չափորոշիչների մշակման, ընթացիկ և զարգացող միտումների պայմաններում դրանց արդիականության ապահովման և խորհրդատվության մատուցման միջոցով: Այս գծի պատասխանատուները գործում են գործադիր մարմնի ենթակայության տակ, հաշվետու են գործադիր մարմնին, սակայն չպետք է անմիջականորեն ներգրավված լինեն գործառնական գործընթացներում: Չի բացառվում նաև երկրորդ գծի հաշվետու լինելը խորհրդին:

Երրորդ գիծը, որը հաճախ կոչվում է ներքին աուդիտ, կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի կարևոր դերակատարն է: Այն պատասխանատու է համապատասխանության և ռիսկի կառավարման ռազմավարությունների անկախ և անաչառ վերահսկման ու գնահատման համար, ինչի արդյունքում ներկայացնում է համակարգի բարելավման առաջարկներ, խորհուրդներ:

Պատժամիջոցներ

Երրորդ գիծն ուղղակիորեն հաշվետու է կազմակերպության խորհրդին:

Պատժիչ կամ սահմանափակող գործողություններ, որոնք ձեռնարկվում են վարքագծի կամ քաղաքականության փոփոխություն հրահրելու նպատակով:

Պատժամիջոցներ բազմակողմ

Պատժամիջոցների ռեժիմ, որը սահմանվում է մեկից ավելի երկրների կամ կազմակերպության կողմից:

Պատժամիջոցներ համապարփակ

Պատժամիջոցներ, որոնք արգելում են պատժամիջոցներ կիրառող երկրին որևէ գործարք կամ գործունեություն իրականացնել պատժամիջոցների ենթակա սուբյեկտի հետ, բացառությամբ հատուկ դեպքերի:

Պատժամիջոցներ միակողմ

Պատժամիջոցների ռեժիմ, որը սահմանվում է մեկ երկրի կողմից:

Պատժամիջոցներ շրջանցող օտարերկրյա անձ

Օտարերկրյա անձ, որը խախտել է, փորձ է կատարել, դավադրություն է կազմակերպել խախտելու համար կամ պատճառ է դարձել, որ խախտվի պատժամիջոցների ռեժիմը: ԱՄՆ Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (ՕԱՎԳ) հրապարակում է պատժամիջոցներ շրջանցող օտարերկրյա սուբյեկտների ցուցակը, որոնց մասնակցությամբ գործարքներն արգելված են ԱՄՆ-ում:

Պատժամիջոցներ ոլորտային

Պատժամիջոցներ, որոնք թիրախավորում են երկրի տնտեսության կոնկրետ ոլորտները և/կամ սուբյեկտներին՝ համաշխարհային տնտեսության վրա պատժամիջոցների բացասական ազդեցությունը կառավարելու նպատակով:

Պատժամիջոցներ տնտեսական

Բնականոն առևտրային կամ ֆինանսական հարաբերությունների ընդհատում կամ ընդհատման սպառնալիք (օրինակ՝ առևտրի, տնտեսական աջակցության արգելք, ֆինանսական գործարքների դադարեցում), որը կիրառվում է մեկ երկրի, մի խումբ երկրների կամ բազմակողմ կազմակերպության (օրինակ՝ ՄԱԿ) կողմից միջազգային նորմերը խախտող կոնկրետ երկրի, կազմակերպության կամ անհատների խմբի նկատմամբ: Պատժամիջոցները սովորաբար օգտագործվում են որպես արտաքին քաղաքականության գործիք՝ սահմանափակելու թիրախի տնտեսական գործունեությունը, հատկապես այն դեպքերում, երբ դիվանագիտական ճնշումը չափազանց մեղմ է, իսկ ռազմական գործողությունները՝ չափազանց արմատական: Պատժամիջոցները կարող են հետապնդել տարբեր արտաքին քաղաքական և/կամ ազգային նպատակներ, ինչպիսիք են մարդու իրավունքների բարելավումը, ագրեսիայի կամ զենքի տարածման կանխումը:

Պատժամիջոցների ենթակա սուբյեկտների ցուցակ

Փաստաթուղթ կամ տվյալների բազա, որը բովանդակում է ֆիզիկական, իրավաբանական անձանց և երկրների ցուցակ, որոնց հետ գործարար հարաբերությունների հաստատումն արգելված է:

Պատժամիջոցների միջանցիկ/շղթայական ռիսկ

Ռիսկ, երբ կազմակերպության հաճախորդի դուստր ձեռնարկությունների վրա ազդող պատժամիջոցները կարող են ազդել նաև կազմակերպության և դրա գործընկերների վրա: Նման ռիսկերը միայն հաճախորդի խնդիրը չեն:

Մեծ Բրիտանիայում և ԱՄՆ-ում կարգավորող մարմինները պահանջում են գործարքի բոլոր կողմերից ստուգել իրենց առնչությունը պատժամիջոցների հետ: Հետևաբար, ֆինանսական հաստատությունները պետք է պահանջեն և ստուգեն հաճախորդի հետ կապակցված կազմակերպությունների մասին տեղեկատվությունը:

Պատժամիջոցների շրջանցում

Պատժամիջոցների ենթակա երկրների, անձանց մասնակցությունը գործարքից կամ գործարքների շարքից հեռացնելու կամ թաքցնելու միտումնավոր փորձ:

Պատժամիջոցների ռեժիմ

Պատժամիջոցների շարք, որոնք ունեն ընդհանուր նպատակ կամ թեմա: Դրանք որպես կանոն կրում են թողարկողի կամ դրանց թիրախի անվանումը: Օրինակ՝ «ՕԱՎԳ պատժամիջոցների ռեժիմ» կամ «Հյուսիսային Կորեայի պատժամիջոցների ռեժիմ»:

Պատժամիջոցներին համապատասխանության ծրագիր

Պատժամիջոցներին համապատասխանության և դրանց ռիսկը կառավարելու կազմակերպության ծրագիր: Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (ՕԱՎԳ) խրախուսում է ԱՄՆ իրավասության ներքո գտնվող կազմակերպություններին կիրառել ռիսկահեն մոտեցում պատժամիջոցներին համապատասխանության հարցում՝ մշակելով, ներդնելով և պարբերաբար թարմացնելով պատժամիջոցներին համապատասխանության ծրագիրը: Պատժամիջոցների և փողերի լվացման դեմ պայքարի համապատասխանության ծրագրերի հիմքում որպես կանոն նույն մեթոդաբանությունն է:

Պատժամիջոցներին համապատասխանության պատասխանատու (ՊՀՊ)

ԱՄՆ Օտարերկրյա ակտիվների վերահսկման գրասենյակը (ՕԱՎԳ) առանձնացրել է պատժամիջոցներին համապատասխանության ծրագրի հետևյալ հինգ էական բաղադրիչները՝ (1) ղեկավարության հանձնառություն, (2) ռիսկերի գնահատում, (3) ներքին հսկողություն, (4) ստուգում և աուդիտ, (5) վերապատրաստում:

Պատժամիջոցներին համապատասխանության ծրագրի կառավարման կառուցվածքում պատժամիջոցներին համապատասխանության համար պատասխանատու անձ, որն իրականացնում է պատժամիջոցներին համապատասխանության ընթացիկ մոնիթորինգը: ՊՀՊ-ն պատժամիջոցներին առնչվող բոլոր հարցերով կոնտակտային անձ է և պատասխանատու է կասկածելի գործարքների մասին հաշվետվությունների ներկայացման համար: Պատժամիջոցներին համապատասխանության ծրագրի արդյունավետ վերահսկողությունն ապահովելու, ինչպես նաև շահերի բախումը և կողմնակալ խորհրդատվությունն ու խորհրդակցությունը կանխելու համար ՊՀՊ-ն պետք է ունենա բավարար անկախություն բիզնես գծերից:

Պատժամիջոցներին համապատասխանություն

Պատժամիջոցներին վերաբերող օրենսդրական դաշտը, կարգավորումները, կանոնները և նորմերը պահպանելու և դրանց հետևելու գործընթաց:

Պատշաճ ուսումնասիրություն

Բիզնես գործարքին նախապատրաստվելու շրջանակներում հաճախորդին ուսումնասիրելու գործընթաց:

Այն անհրաժեշտ է հաճախորդի վերաբերյալ պատշաճ պատկերացում կազմելու համար և ենթադրում է հաճախորդի ինքնության ու նրա գործարար բնութագրի վերաբերյալ տեղեկությունների ու փաստաթղթերի հավաքագրման ու վերլուծության գործընթաց, որը ներառում է՝

1. հաճախորդի, այդ թվում՝ լիազորված անձի և իրական շահառուի նույնականացում և ինքնության ստուգում,
2. գործարքի (գործարար հարաբերության) նպատակի և նախատեսվող բնույթի պարզում,
3. գործարար հարաբերության ընթացիկ պատշաճ ուսումնասիրություն:

Պատշաճ ուսումնասիրություն հավելյալ

Պատշաճ ուսումնասիրություն, որը կատարվում է ՓԼ/ԱՖ բարձր ռիսկի դեպքում և ներառում հետևյալ միջոցառումները՝ ի լրումն պատշաճ ուսումնասիրությամբ սահմանված գործողությունների.

- ❖ հաճախորդի հետ գործարար հարաբերություն հաստատելու և շարունակելու նպատակով, ինչպես նաև, երբ պարզվում է, որ հաճախորդը կամ իրական շահառուն բնութագրվում է բարձր ռիսկի չափանիշով, կամ գործարքը կամ գործարար հարաբերությունը ներառում է այդպիսի չափանիշ, հաշվետվություն տրամադրող անձի ավագ ղեկավարության հավանության ստացում,

- ❖ հաճախորդի, ինչպես նաև քաղաքական ազդեցություն ունեցող անձ հանդիսացող իրական շահառուի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը պարզելու համար միջոցառումների ձեռնարկում,
- ❖ գործարքի կամ գործարար հարաբերության նախապայմանների և նպատակի հնարավորինս մանրամասն ուսումնասիրում,
- ❖ քաղաքական ազդեցություն ունեցող անձի դեպքում՝ ընթացիկ հավելյալ դիտարկման իրականացում:

Պատշաճ ուսումնասիրություն պարզեցված

Պատշաճ ուսումնասիրություն, որը կատարվում է ՓԼ/ԱՖ ցածր ռիսկի դեպքում և ներառում հետևյալ միջոցառումները.

1. ստուգվում է գործարքի առնչությամբ պահանջվող տեղեկությունների (փաստաթղթերի) իսկությունը՝ հիմք ընդունելով հաճախորդի տրամադրած տեղեկատվությունը,
2. համադրվում են միավոր ժամանակահատվածում հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները, երբ դրանք գերազանցում են հաճախորդի գործարար բնութագրի տեսանկյունից ողջամիտ գումարային սահմանաչափը,
3. հաճախորդների և գործարքների միջև կապերի առկայությունը ստուգվում է միայն այն դեպքում, երբ ի հայտ են եկել միջին կամ բարձր ռիսկի հաճախորդների կամ գործարքների հետ կապեր:

Պատշաճ ուսումնասիրություն ստանդարտ

Պատշաճ ուսումնասիրություն, որը կատարվում է ՓԼ/ԱՖ միջին (ստանդարտ) ռիսկի դեպքում և ներառում հետևյալ միջոցառումները.

1. գործարքի առնչությամբ հաճախորդից պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) իսկությունը և հավաստիությունը ստուգելիս օգտագործվում են տեղեկատվության սահմանափակ մատչելիությամբ և հանրամատչելի աղբյուրներ, կատարվում է հարցումներ հնարավորինս մեծ թվով իրավասու մարմիններին և այլ հաշվետու անձանց, ինչպես նաև օտարերկրյա գործընկերներին,
2. համադրվում են հաճախորդի՝ միավոր ժամանակահատվածում տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը և ծավալները,
3. պարզվում է հաճախորդների, գործարքների և գործարար հարաբերությունների միջև կապերի առկայությունը,
4. ստուգվում է գործարքի կամ գործարար հարաբերության համադրելիությունը հաճախորդի գործարար բնութագրին,
5. ներքին իրավական ակտով սահմանված դեպքում պարզվում է հաճախորդի եկամուտների և ունեցվածքի աղբյուրը,
6. ձեռնարկվում են ներքին իրավական ակտերով սահմանված այլ միջոցառումներ:

Պատրաստի (շեղծ) ընկերություն

Ընկերություն, որը ստեղծվում է նախապես և պահվում է «պահեստում» մինչև դրա անհրաժեշտությունն առաջանալու պահը:

Պարսից ծոցի համագործակցության խորհուրդ

Տարածաշրջանային տնտեսական, սոցիալական և քաղաքական կազմակերպություն, որը միավորում է Պարսից ծոցի 6 արաբական միապետությունները: Խորհրդի նպատակներն են՝ անդամ երկրների ինտեգրման խորացումը, դրանց միջև համագործակցության խթանումը, ազգաբնակչության միջև կապերի ամրապնդումը, նույնանման կարգավորման դաշտի ձևավորումը, գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը: Այն ՖԱԹՖ անդամ է, սակայն դրա անդամները՝ ոչ:

Պեսոյի փոխանակման սև շուկա

Առևտրային գործարքների միջոցով փողերի լվացման բարդ սխեմա, որը ձևավորվել է արտարժույթի փոխանակման ոլորտում Կոլումբիայում ներդրած սահմանափակումների արդյունքում: Այս սահմանափակումները շրջանցելու համար կոլումբիական ընկերությունները խուսափել են պետական վճարներից՝ աշխատելով սև շուկայում կամ այլընտրանքային ֆինանսական համակարգում գործող պեսո բրոքերների հետ: Թմրամիջոցների առևտրով զբաղվող կոլումբիացիներն օգտագործել են այս սխեման՝ ԱՄՆ-ում թմրամիջոցների վաճառքից ստացված դոլարները պեսոյով փոխանակելու նպատակով:

Պոնցիի սխեմա (ֆինանսական բուրգ)

Ներդրումային խարդախության տեսակ, որը ենթադրում է առկա ներդրողների եկամուտների վճարում նոր ներդրողների միջոցների հաշվին: Սխեման փլուզվում է, երբ նոր ներդրումների հոսքը դանդաղում է կամ առկա ներդրողները դուրս են բերում իրենց միջոցները, ինչն անհնար է դարձնում ենթադրյալ եկամուտների վճարումները:



Ռիսկ

ՓԼ/ԱՖ վտանգավորության և դրա հավանականության մասին վկայող հանգամանք, որը կարող է բնութագրվել ըստ երկրների կամ աշխարհագրական տեղակայման, հաճախորդների տեսակի, գործարքների կամ գործարար հարաբերությունների տեսակի, ծառայությունների տեսակի կամ այլ չափանիշների:

Ռիսկ բնորոշ

Ռիսկի ներքին և արտաքին գործոնների համակցություն, որն առկա է առանց կառավարման որևէ գործողության:

Ռիսկ գործառնական

Ներքին գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի ձախողման կամ արտաքին գործոնների ազդեցության հետևանքով կորուստներ կրելու հավանականություն:

Ռիսկ ընթացիկ (մնացորդային)

Ռիսկի մակարդակ, որը ձևավորվում է ռիսկի ազդեցությունն ու հավանականությունը մեղմելու նպատակով միջոցառումների ձեռնարկումից հետո: Այն հաճախ սահմանվում է որպես հսկողության առկա համակարգի միջոցով կառավարվող ռիսկ:

Ռիսկ իրավական

Դատական հայցի, կարգավորման պահանջներին անհամապատասխանության կամ պայմանագրային պարտավորությունների չկատարման հետևանքով կորուստներ կրելու հավանականություն:

Ռիսկ իրացվելիության

Պարտատերերի օրինական պահանջները ժամանակին և պատշաճորեն չկատարելու հետևանքով կորուստներ կրելու հավանականություն:

Ռիսկ կենտրոնացման

Ցանկացած ազդեցություն կամ ազդեցությունների խումբ, որը կարող է էապես վտանգել ֆինանսական հաստատության կենսունակությունը կամ բնականոն գործունեությունը: Կենտրոնացման ռիսկն առաջին հերթին ազդում է ակտիվների վրա: Այս համատեքստում վերահսկող մարմինները ֆինանսական հաստատություններից պահանջում են ներդնել վարկերի կենտրոնացումները բացահայտելու տեղեկատվական համակարգեր, ինչպես նաև սահմանափակում ֆինանսական հաստատության ազդեցությունն առանձին փոխառուների կամ փոխկապակցված փոխառուների խմբերի վրա: Պարտավորությունների մասով կենտրոնացման ռիսկը կապված է ֆինանսավորման ռիսկի, մասնավորապես՝ խոշոր ավանդատուների կողմից միջոցների վաղաժամկետ և հանկարծակի դուրսբերման սպառնալիքի հետ, ինչը կարող է խաթարել ֆինանսական հաստատության իրացվելիությունը:

Ռիսկ հեղինակության (համբավի)

Հանրության բացասական կարծիքի/վերաբերմունքի հետևանքով առկա կամ հավանական հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականություն:

Ռիսկ շուկայական

Շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված կորուստներ կրելու հավանականություն:

Ռիսկ ռազմավարական (գործարար մոդելի)

Ոչ համապատասխան գործարար ռազմավարություն ընտրելու կամ ռազմավարության հիմքում ընկած ենթադրություններում, ցուցանիշներում, նպատակներում կամ այլ գործոններում բացասական տեղաշարժերի հետևանքով կորուստներ կրելու հավանականություն:

Ռիսկահեն մոտեցում

ՓԼ/ԱՖ կանխարգելման կառուցակարգերի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու նպատակով հաճախորդների հետ գործարքների և գործարար հարաբերությունների ռիսկերի գնահատում:

Ռիսկերի գնահատում

Գործիք, որը հնարավորություն է տալիս որոշել ՓԼ/ԱՖ ռիսկերի ծագման հավանականությունը և ազդեցությունը և ըստ այդմ ներդնել դրանց կառավարման արդյունավետ կառուցակարգեր:

Ռիսկի ախորժակ

Ռիսկերի ընդհանուր մակարդակ, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել իր նպատակներին հասնելու համար: Ռիսկի ախորժակն արտացոլում է կազմակերպության վերաբերմունքը ռիսկերի նկատմամբ:

Ռիսկի ախորժակը տարբերվում է՝ կազմակերպության գործունեության ոլորտով, կորպորատիվ մշակույթով, ռեսուրսային ներուժով, նպատակների բնույթով, մրցակցային միջավայրով և այլ գործոններով պայմանավորված:

Ռիսկի հանդուրժողականություն

Ռիսկերի մակարդակ, որը կազմակերպությունը պատրաստ է ստանձնել կոնկրետ ոլորտում: Ռիսկի հանդուրժողականությունն արտահայտում է կոնկրետ ոլորտում ռիսկերի առավելագույն և նվազագույն թույլատրելի շեմերը: «Ռիսկի ախորժակը» և «ռիսկի հանդուրժողականությունը» տարբեր, սակայն փոխկապված եզրույթներ են, մասնավորապես.

1. Ռիսկի հանդուրժողականությունը որոշվում է ռիսկի ախորժակի հիման վրա:
2. Ռիսկի ախորժակը կրում է ռազմավարական, իսկ ռիսկի հանդուրժողականությունը՝ մարտավարական բնույթ:
3. Ռիսկի ախորժակը համակարգային չափում է, մինչդեռ ռիսկի հանդուրժողականությունը՝ նեղ և ոլորտային:

Ռիսկի չափանիշ բարձր

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձ, նրա ընտանիքի անդամ կամ նրա հետ այլ կերպ փոխկապակցված անձ (հայր, մայր, ամուսին, տատ, պապ, քույր, եղբայր, երեխաներ, ամուսնու ծնողներ) հանդիսացող հնարավոր կամ առկա հաճախորդները կամ իրական շահառուները, անձինք (ներառյալ՝ ֆինանսական հաստատությունները), որոնք գտնվում կամ բնակվում են չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում կամ այդպիսի երկրներից կամ տարածքներից են, բոլոր բարդ կամ անսովոր մեծ գումարով գործարքները, ինչպես նաև անսովոր պայմաններով գործարքները կամ գործարար հարաբերությունները, որոնց տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներն ակնհայտ չեն:

Ռիսկի չափանիշ ցածր

Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում բարձր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ:

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ չափանիշ, որը վկայում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները, պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, պետական ոչ առևտրային կազմակերպությունները, պետական կառավարչական հիմնարկները, բացառությամբ չհամապատասխանող երկրներում կամ տարածքներում գտնվող մարմինների կամ կազմակերպությունների: Ընդ որում, գործարքում կամ գործարար հարաբերությունում ցածր ռիսկի չափանիշի առկայությունը լիազոր մարմնի նախատեսած դեպքերում կարող է բնորոշվել սահմանված չափանիշների համակցությամբ:

Ս

Սթրիփինգ

ՓԼ/ԱՖ մեթոդ, որը ենթադրում է ֆինանսական հաստատության կողմից դրամական փոխանցման հաղորդագրություններից էական տվյալների հեռացում, փոփոխում կամ կեղծում:

Սթրոու մեն (կեղծ անձ)

Երրորդ անձ, որը գործարքում զբաղեցնում է դրա իրական շահառուի՝ որպես կանոն բարձր ռիսկի չափանիշով բնութագրվող անձի տեղը և գործում վերջինիս թելադրանքով: Կեղծ անձանց ներգրավման նպատակն իրական շահառուի ինքնության թաքցնումն է՝ հավելյալ պատշաճ ուսումնասիրությունից խուսափելու կամ արգելված գործունեություն իրականացնելու նպատակով:

Ստուգում պարզ

Հետաքննության առաջնային քայլ, որը ձեռնարկվում է ՓԼ/ԱՖ հետ կապը հերքելու կամ հաստատելու համար: Պարզ ստուգման օրինակ է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկի և «Ճանաչի՛ր հաճախորդիդ» կառուցակարգի տվյալների համադրումը:

Վ

Վուլֆսբերգյան խումբ

Համաշխարհային 12 բանկերի ասոցիացիա, որը մշակում է ֆինանսական հանցագործությունների ռիսկերի կառավարման շրջանակ և առաջարկություններ: 2000թ.-ին Խումբը Թրանսփարենսի Ինթերնեշնլի և միջազգային փորձագետների հետ համագործակցությամբ միջազգային մասնավոր բանկերի համար մշակել է փողերի լվացման դեմ պայքարի համաշխարհային ուղենիշներ:

Տ

Տեղաբաշխում

Հանցավոր ճանապարհով ստացված միջոցները (հաճախ ֆինանսական) որևէ հաստատության միջոցով օրինական տնտեսական (հաճախ ֆինանսական) համակարգ առաջին անգամ մտցնելը, օրինակ՝ դրանք ավանդ դնելու, արժեթղթեր կամ այլ ակտիվներ ձեռք բերելու միջոցով՝ երբեմն միջոցները մասնատելով ավելի փոքր գումարների, որպեսզի դրանք կասկած չհարուցեն կամ չգերազանցեն պարտադիր հաշվետվություն տրամադրելու համար նախատեսված սահմանաչափը:

Տիպաբանություն

Համաձայն «ՓԼ/ԱՖ դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ լիազոր մարմնի իրավական ակտերով, ինչպես նաև հաշվետվություն տրամադրող անձի ներքին իրավական ակտերով սահմանված՝ փողերի լվացմանը կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գործողությունների և (կամ) քայլերի տրամաբանությունն ու հաջորդականությունը նկարագրող հնարավոր սխեմա:

Տրաստ

Օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմավորում, որտեղ տրաստի կառավարիչը ֆիդուցիար պարտավորությունների հիման վրա կատարում է տրաստի հիմնադրի կողմից սեփականության իրավունքով իրեն փոխանցված գույքի հետ կապված գործարքներ՝ ի շահ տրաստի շահառուի:

Տրաստի հիմնադիր

Ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն իր ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը տրաստային կառավարման պայմանագրի կամ համանման համաձայնության միջոցով փոխանցում է տրաստային կառավարչին՝ ի շահ տրաստի շահառուի գործարքներ իրականացնելու նպատակով: Հիմնադիրը կարող է հանդես գալ որպես տրաստի կառավարիչ կամ շահառու:

Յ

Ցուցակ գորշ

Տարեկան երեք անգամ ՖԱԹՖ-ի կողմից հրապարակվող ցուցակ, որը ներառում է փողերի լվացման, ահաբեկչության և զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի իրենց համակարգերում ռազմավարական բացթողումները վերացնելու ուղղությամբ ՖԱԹՖ-ի հետ ակտիվորեն համագործակցող երկրները: Սա նշանակում է, որ երկիրը պարտավորություն է ստանձնել անհապաղ լուծել հայտնաբերված ռազմավարական բացթողումները համաձայնեցված ժամկետներում և ենթակա է ուժեղացված մոնիթորինգի:

Ցուցակ սպիտակ

Հաճախորդների, մատակարարների և ֆինանսական հաստատությունների ցուցակ, որոնք ֆինանսական, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ հանցագործություններ գործելու տեսանկյունից համարվում են ցածր ռիսկային: Դրանց նկատմամբ վստահության մակարդակը պայմանավորված է կարգավորման պահանջներին դրանց համապատասխանությամբ, հեղինակությամբ և նախորդ գործունեությամբ:

Ցուցակ սև

Տարեկան երեք անգամ ՖԱԹՖ-ի կողմից հրապարակվող ցուցակ, որը ներառում է փողերի լվացման, ահաբեկչության և զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարում էական ռազմավարական բացթողումներ ունեցող երկրները:

ՖԱԹՖ-ը կոչ է անում իր անդամներին և խստորեն խրախուսում բոլոր երկրներին սև ցուցակում ներառված երկրներին ենթարկել հավելյալ պատշաճ ուսումնասիրության:



Փոխադարձ իրավական օգնության պայմանագիր

Միջպետական համաձայնագիր, որը նախատեսում է փոխադարձ օգնություն դատական վարույթներում, ինչպես նաև պաշտոնական հետաքննության և քրեական հետապնդման շրջանակներում փաստաթղթերին, վկաներին և այլ իրավական/դատական ռեսուրսներին հասանելիության տրամադրում:

Փողերի լվացում (ՓԼ)

Ապօրինի ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացում՝ թաքցնելով դրանց իրական ծագումը, պատկանելությունը և նպատակը:

Համաձայն ՀՀ Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի՝ ՓԼ-ն կարելի է սահմանել որպես հանցավոր ճանապարհով ստացված գույքի փոխարկում կամ փոխանցում, որը նպատակ է ունեցել թաքցնել կամ խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը կամ օժանդակել որևէ անձի, որպեսզի նա խուսափի իր կատարած հանցանքի համար պատասխանատվությունից, կամ գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը, գտնվելու վայրը, տնօրինման եղանակը, տեղաշարժը, տեղաբաշխումը, իրավունքները կամ պատկանելությունը թաքցնելը կամ խեղաթյուրելը կամ գույք ձեռք բերելը կամ տիրապետելը կամ պահելը

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ԵՄ կանոնակարգ (AMLR)

կամ օգտագործելը կամ տնօրինելը:

Նորմատիվ իրավական ակտ, որը փոխարինում է նախկինում ընդունված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի հրահանգները և նպատակ ունի ապահովել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նորմերի միասնական իրավակիրարկումը ԵՄ բոլոր անդամ երկրներում: Այն ընդլայնել է հաշվետու սուբյեկտների ցուցակը բոլոր տեսակի կրիպտոակտիվների մատակարարներով, քրաուդֆանդինգային հարթակներով, վարկային միջնորդներով, ժամանակավոր կացության թույլտվություն ստանալու հարցում աջակցող օպերատորներով, շքեղ ապրանքների մանրածախ առևտրականներով, ինչպես նաև պրոֆեսիոնալ ֆուտբոլային ակումբներով և գործակալներով:

Կանոնակարգը սահմանել է հաճախորդների պատշաճ ուսումնասիրության երեք մակարդակ. ստանդարտ, պարզեցված՝ ցածր ռիսկային հաճախորդների համար և հավելյալ՝ բարձր ռիսկի չափանիշով բնութագրվող հաճախորդների, այդ թվում՝ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց համար: Խստացվել են հաճախորդների պատշաճ ուսումնասիրության պահանջները. գործարքների պատշաճ ուսումնասիրության նվազագույն շեմը 15,000 եվրոյից իջեցվել է մինչև 10,000 եվրո և սահմանվել են առանձին պահանջներ 3,000 եվրոյից ավելի կանխիկ գործարքների համար: Կանոնակարգով հստակեցվել են նաև ընկերությունների և տրաստների իրական շահառուների որոշման չափանիշները:

Բացի այդ, արգելվել է 10,000 եվրոյից ավելի վճարումների կատարումը կանխիկ միջոցներով, սահմանափակվել ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործառույթների արտապատվիրակումը, ինչպես նաև ընդլայնվել է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումը՝ ներառելով տարածաշրջանային, տեղական, մունիցիպալ և քաղաքային կառավարման մարմինների ղեկավարներին, իսկ առավել ազդեցիկ պաշտոնատար անձանց դեպքում՝ նաև վերջիններիս քույրերին/եղբայրներին:

Կանոնակարգն ուժի մեջ է մտել 2024թ.-ի հուլիսի 9-ին, իսկ դրա կիրարկումը սկսվելու է 2027թ.-ի հուլիսի 10-ից:

ՓԼ/ԱՖ կանխարգելման համակարգ

Ռիսկերի բացահայտման, գնահատման ու կառավարման, հաճախորդների նույնականացման և ուսումնասիրության, գործարքների վերլուծության, տվյալների հավաքագրման ու պահպանման, վերահսկման և հաշվետվողականության ընթացակարգերի մանրակրկիտ ճանապարհային քարտեզ, որն անհրաժեշտ է՝

- ❖ ՓԼ/ԱՖ իրավական համապատասխանությունն ապահովելու, ՓԼ/ԱՖ ներպետական և միջազգային զարգացումներին համահունչ արձագանքելու,
- ❖ Ֆինանսական կորուստներից և իրավական հետևանքներից խուսափելու միջոցով կազմակերպության ֆինանսական կայունությունն ու գործարար հեղինակությունն ամրապնդելու,

- ❖ շրջահայաց գործարար հարաբերություններ հաստատելու միջոցով հաճախորդների ֆինանսական կորուստների ռիսկը նվազեցնելու և նրանց գոհունակությունն ամրապնդելու,
- ❖ ֆինանսական հանցագործությունների դեմ պայքարում և տնտեսական կայունության ապահովման հարցում սեփական ներդրումն ունենալու համար:

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տվյալների միջազգային շտեմարան

Բազմալեզու շտեմարան, որը միավորում է ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային և ազգային օրենսդրությունների վերլուծություններ, տեղական իրավասու մարմինների կոնտակտային տվյալներ: Անդրսահմանային գործերով զբաղվող իրավապահ մարմինների համար ծառայում է որպես կարևոր սկզբնաղբյուր: Հարթակը կառավարվում է Փողերի լվացման տեղեկատվության միջազգային ցանցի (IMoLIN) կողմից:

Փոխադարձ գնահատման զեկույց (Mutual Evaluation Report)

ՖԱԹՖ Հանձնարարականների հիման վրա մշակվող զեկույց, որը գնահատում է կոնկրետ երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի արդյունավետությունը և բովանդակում դրա բարելավման վերաբերյալ առաջարկություններ: Դրանք մշակվում են գործընկերային ձևաչափով. մի երկրի մասնագետները գնահատում են մեկ այլ երկրի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգը:

Փոխըմբռնման հուշագիր

Համագործակցության համաձայնագիր, որը չունի պարտադիր իրավաբանական ուժ: Արտահայտում է կողմերի փոխադարձ ակնկալիքները և մտադրությունները:

Փոխըմբռնման հուշագիրը հաճախ օգտագործվում է ակտիվները բռնագրավելու միջազգային գործերում ակտիվների փոխանակումը կարգավորելու, ՓԼ/ԱՖ դեմ պայքարի նախաձեռնություններում երկրների պարտականությունները սահմանելու, ինչպես նաև հետաքննության ընթացքում ֆինանսական հետախուզության մարմինների միջև տեղեկատվության փոխանակումն ապահովելու նպատակով:



Քաղաքական ազդեցություն ունեցող անձ

Պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձ (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

- ❖ պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,
- ❖ խորհրդարանի անդամները,

- ❖ բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,
- ❖ կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,
- ❖ դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,
- ❖ քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,
- ❖ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,
- ❖ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,
- ❖ միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները:

O

**Օտարերկրյա ակտիվների վերահսկման
գրասենյակ (ՕԱՎԳ)**

ԱՄՆ Ֆինանսների դեպարտամենտի գործակալություն, որը պատասխանատու է արտաքին տնտեսական պատժամիջոցների կառավարման և կիրարկման համար: Իր առաքելության շրջանակներում ՕԱՎԳ-ն վարում է հատուկ նշանակված քաղաքացիների և արգելափակված անձանց ցուցակ:

Օֆշոր (հարկային դրախտ)

Գոտիներ, որոնք հարկման արտոնյալ ռեժիմի և բանկային գաղտնիքի վերաբերյալ խիստ կարգավորումների բացակայության պատճառով օտարերկրյա ներդրումների համար համարվում են բարենպաստ:

Օֆշորային ֆինանսական կենտրոն

Երկիր, որը ֆինանսական ծառայություններ է մատուցում ոչ ռեզիդենտներին:



ՖԱԹՖ

Անկախ միջկառավարական մարմին, որը սահմանում է փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման, ինչպես նաև միջազգային ֆինանսական համակարգի ամբողջականության այլ սպառնալիքների դեմ պայքարի չափանիշներ (Հանձնարարականներ) և խթանում իրավական, կարգավորիչ ու գործառնական միջոցառումների արդյունավետ իրականացումը: Միջազգային այլ շահակիցների հետ համագործակցությամբ միջազգային ֆինանսական համակարգը չարաշահումներից պաշտպանելու նպատակով՝ ՖԱԹՖ-ը նաև աշխատանքներ է իրականացնում երկրների խոցելի կողմերը բացահայտելու ուղղությամբ:

ՖԱԹՖ Հանձնարարականներ

ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային չափանիշներ, որոնցով նախատեսվում են հետևյալ առանցքային միջոցառումները՝

- ❖ ռիսկերի բացահայտում, քաղաքականությունների մշակում և ներպետական մակարդակով համակարգում,
- ❖ փողերի լվացման, ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում,

- ❖ ֆինանսական հատվածում և այլ նախատեսված հատվածներում կանխարգելիչ միջոցառումների իրականացում,
- ❖ իրավասու մարմինների (մասնավորապես՝ քննչական, իրավապահ և վերահսկող մարմիններ) լիազորությունների և պարտականությունների, ինչպես նաև այլ ինստիտուցիոնալ միջոցառումների շրջանակի սահմանում,
- ❖ իրավաբանական անձանց և կազմավորումների իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկության և հասանելիության բարելավում և
- ❖ միջազգային համագործակցության դյուրացում:

ՖԱԹՖ Հանձնարարականները պետությունների համար **դեյուրե** պարտադիր բնույթ չեն կրում, սակայն պետությունների ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգերի գնահատումը կատարվում է դրանցով: Գնահատման արդյունքում անդամ-երկրներում բացահայտվում են Հանձնարարականների հիման վրա համապատասխան օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման և ներդրման արդյունավետությունը, դրանց համապատասխանությունը ՖԱԹՖ Հանձնարարականներին:

ՖԱԹՖ տիպի տարածաշրջանային կազմակերպություններ

Իրենց գործառույթներով և կառուցվածքով ՖԱԹՖ-ին հիշեցնող կազմակերպություններ, որոնց ջանքերը սահմանափակվում են կոնկրետ տարածաշրջաններով: ՖԱԹՖ-ի հետ համագործակցությամբ դրանք ձևավորում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գլոբալ ցանց:

Այդպիսիք են՝

- ❖ Եվրախորհրդի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի փորձագետների հանձնախումբը (ՄԱՆԻՎԱԼ),
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Ասիա/Խաղաղօվկիանոսյան խումբը,
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Եվրասիական խումբը (ԷԱԳ),
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Կարիբյան խումբը,
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Հարավարևելյան Աֆրիկայի խումբը,
- ❖ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի խումբը,
- ❖ Փողերի լվացման դեմ պայքարի լատինամերիկյան խումբը (ԳԱՖԻԼԱԹ):

Ֆինանսական հաստատություն

Ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը որպես ձեռնարկատիրական գործունեություն հաճախորդների համար կամ անունից իրականացնում է հետևյալ գործունեությունը կամ գործառնությունները կամ դրանցից որևէ մեկը.

1. ավանդների կամ վերադարձման ենթակա այլ միջոցների ընդունում հանրությունից,
2. վարկավորում,
3. ֆինանսական լիզինգ,
4. փողի կամ արժեքների փոխանցում,

5. վճարային գործիքների (կրեդիտային և դեբետային քարտեր, չեկեր, ճամփորդական չեկեր, վճարման հանձնարարականներ և բանկային չեկեր, էլեկտրոնային փողեր) թողարկում և կառավարում,
6. ֆինանսական երաշխիքներ և պարտավորություններ,
7. առևտուր՝
 - ♦ փողի շուկայի գործիքներով (չեկեր, մուրհակներ, ավանդային վկայագրեր, ածանցյալ գործիքներ),
 - ♦ արտարժույթով,
 - ♦ արժույթի, տոկոսադրույքի և ինդեքսային գործիքներով,
 - ♦ փոխանցվող արժեթղթերով,
 - ♦ ապրանքների ֆյուչերսներով,
8. մասնակցություն արժեթղթերի թողարկումներին և վերջիններիս առնչվող ֆինանսական ծառայությունների մատուցմանը,
9. անհատական և կոլեկտիվ պորտֆելների կառավարում,
10. կանխիկի կամ այլ իրացվելի արժեթղթերի անվտանգ պահպանում և կառավարում այլ անձանց անունից,
11. այլ անձանց անունից միջոցների կամ փողերի ներդրում, կառավարում կամ տնօրինում,
12. կյանքի ապահովագրության և ներդրումային բնույթի այլ ապահովագրության վկայագրերի թողարկում և տեղաբաշխում,

Ֆինանսական հետախուզության մարմին

Ֆինանսական հետախուզության մարմինների համաշխարհային կազմակերպություն (Էգմոնտ խումբ)

13. փողի կամ արժույթի փոխանակում:

Կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ և ՓԼ/ԱՖ գործունեության կասկածների վերաբերյալ այլ տեղեկություններ ստացող, իսկ եթե թույլատրված է, ապա նաև պահանջող, վերլուծող և տրամադրող ազգային կենտրոն:

Ֆինանսական հետախուզության ազգային մարմինների ցանց, որի անդամները պարբերաբար հանդիպում են ֆինանսական հետախուզության մարմինների զարգացումը և համագործակցությունը, մասնավորապես՝ տեղեկատվության փոխանակման, ուսուցման և փորձի փոխանցման ոլորտներում քննարկելու նպատակով: Խմբի նպատակն է ֆինանսական հետախուզության մարմինների համար ՓԼ/ԱՖ դեմ պայքարում համագործակցության բարելավման, ոլորտային ազգային ծրագրերի իրականացման դյուրացման համար հարթակի ձևավորումը: